

15.06.04թ. հ. 1026-ԱԿԿ 2682 ԶԼԻ. Լուսն.
22.11.06թ. 2094-ԱԿ 2682 հ. 2189 04.06.07թ. 144509 ԿԻԲ.

320



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

375015, Երևան 15, Գրիգոր Լուսավորչի 13

№ 2060-Ա

« 27 » հոկտեմբերի 200 Յթ.

« ՀԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2003Թ. ՕԳՈՍՏՈՍԻ 21-Ի
« ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻՆ ԳՈՒՅՔ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ »
Հ. 1116-Ն ՈՐՈՇՄԱՆ ԿԱՏԱՐՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ
ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ի կատարումն ՀՀ կառավարության 2003թ. օգոստոսի 21-ի հ. 1116-Ն որոշման՝

1. Երևանի քաղաքապետարանի «Կանաչապատում» ՊՓԲԸ-ի հաշվեկշռում գտնվող Երևան քաղաքի զբոսայգիների, պուրակների ու այգիների տարածքները և ներքին ոռոգման ցանցն ընդունել Երևանի քաղաքապետարանի հաշվեկշիռ:

2. Նշված աշխատանքներն իրականացնելու նպատակով ստեղծել հանձնաժողով (հավելված 1):

3. Հանձնարարել հանձնաժողովին (նախագահ Վ. Վարդանյան)՝ սահմանված կարգով իրականացնել Երևանի քաղաքապետարանի «Կանաչապատում» ՊՓԲԸ-ի հաշվեկշռում գտնվող Երևան քաղաքի զբոսայգիների, պուրակների ու այգիների տարածքների և ներքին ոռոգման ցանցի ընդունման-հանձնման աշխատանքները (հավելված 2):

4. Հանձնարարել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչությանը՝ ճշտել հանձնվող, պետական գրանցում չստացած Երևանի զբոսայգիների, պուրակների ու այգիների հողատարածքների սահմանները և տալ գլխավոր հատակագծեր:

5. Հանձնարարել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարությանը (Ա. Բայբուրջյան) ապահովել Երևանի քաղաքապետարանի հաշվեկշիռ ընդունված Երևան քաղաքի զբոսայգիների, պուրակների ու այգիների պետական գրանցումը:

6. Երևան քաղաքի զբոսայգիների, պուրակների ու այգիների տարածքները և ներքին ոռոգման ցանցն անհատույց օգտագործման իրավունքով հանձնել Կենտրոն (միայն ոռոգման ցանցը), Շենգավիթ, Արաբկիր, Էրեբունի, Քանաքեռ-Զեյթուն, Նոր Նորք և Մալաթիա-Սեբաստիա թաղային համայնքներին (հավելված 3):

7. Սահմանել, որ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 47-րդ հոդվածին համապատասխան թաղային համայնքները սույն որոշման 7-րդ կետում նշված գույքը կարող են օգտագործման (վարձակալության) իրավունքով տրամադրել միայն Երևանի քաղաքապետի համաձայնությամբ:

8. Լիազորել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարությանը (Ա. Բայբուրջյան)՝ Երևանի քաղաքապետի անունից սույն որոշման 7-րդ կետում նշված թաղային համայնքների հետ կնքելու Երևանի զբոսայգիների, պուրակների ու այգիների տարածքների և ներքին ոռոգման ցանցի անհատույց օգտագործման պայմանագրեր:

9. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել հանձնաժողովի (նախագահ Վ. Վարդանյան) վրա:

10. Որոշման կատարման հսկողությունը դնել Երևանի քաղաքապետի առաջին տեղակալ Կ. Արեյանի վրա:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

Գ. Գրախոս ԶԱՆԱՐՅԱՆ



322

Հավելված 2
 Երևանի քաղաքապետի 2003թ.
 հոկտեմբերի 27-ի հ. 2060-Ա
 որոշման

Ց Ա Ն Կ
 Երևանի քաղաքապետարանի «Կանաչապատում» ՊՓԲԸ-ի գույքի

h/h	Գույքի անվանումը	Քանակը	Հաշվեկշռա- յին արժեքը (դրամ)
1.	Թատերական զբոսայգի		792000
2.	Կիրովի անվան զբոսայգի		299200
3.	Մյասնիկյանի արձանին հարող պուրակ		52800
4.	2750-ամյակի շատրվաններին հարող պուրակ		140800
5.	Սարյանի անվան պուրակ		132000
6.	Կոնսերվատորիայի պուրակ		110000
7.	Թամանյանի արձանի դիմացի պուրակ		88000
8.	«Կասկադ» պուրակ		44000
9.	Ազատության հրապարակի պուրակ		66000
10.	Ուսանողական զբոսայգի		167200
11.	Գլխավոր պողոտայի պուրակ		598444
12.	Օղակաձև զբոսայգի /1-6 հատվածներ/		3048760
13.	Խ.Աբովյանի անվան մանկական զբոսայգի		149600
14.	«Բարեկամություն» զբոսայգի		207812
15.	Շիշեռնակաբերդի անտառ-պարկ		5358980
16.	ՀՀ Ազգային ժողովի այգի		1404172
17.	ՀՀ Նախագահի նստավայրի այգի		817476
18.	ՀՀ կառավարության ընդունելությունների տան այգի		431112
19.	ՀՀ կառավարության Հրազդանի կիրճի ամառանոցի այգի		1857856
20.	Հրազդանի կիրճի անտառ-պուրակ		2033504
21.	Եռաբլուրի անտառ-պարկ		841805
22.	«Հաղթանակ» զբոսայգի		797456
23.	Արաբկիրի մանկական զբոսայգի		123024
24.	Կոմիտասի անվան զբոսայգի		447748
25.	Նոր Նորքի զբոսայգի		191307
26.	Էրեբունու մանկական զբոսայգի		137544
27.	Քանաքեռ ՀԷԿ-ի անտառ-պարկ		330413
28.	Արաբկիր համայնքի ներքին ոռոգման ցանց	1672 գծմ	606012
29.	Կենտրոն համայնքի ներքին ոռոգման ցանց	17079գծմ	6025188
30.	Մալաթիա-Սեբաստիա թաղային համայնքի ներքին ոռոգման ցանց	1650գծմ	580800
31.	Շենգավիթ թաղային համայնքի ներքին ոռոգման ցանց	1429գծմ	503052
32.	Էրեբունի թաղային համայնքի ներքին ոռոգման ցանց	942գծմ	331584
33.	Քանաքեռ-Զեյթուն թաղային համայնքի ներքին ոռոգման ցանց	2299գծմ	809248
34.	Հրազդանի կիրճի ներքին ոռոգման ցանց	1311գծմ	475103
	ԸՆԴԱՄԵՆԸ		30.000.000

Երևանի քաղաքապետարանի
 աշխատակազմի ղեկավար



Ս. Կոչեցյան